տերը, և Ծաղկոցաց-Զորոյն ակնապարար տեսա-
րանը, անշուշտ բացագանչել են, թէ՝ «Այս ի՞նչ
Թէոդոսիա, ի՞նչ տուրք Աստուծոյ, Կաւ ա, կաւ է
չորս դին»։ Մեզ հաւանական կ'երևի որ այս բացա-
գանչումը կամ բացատրութիւնը, ապա իբրև յա-
տուկ անուն տեղւոյ անցել է առ Գենուացիս, որք
ի սկզբան, ինչպէս հին յիշատակարանաց մէջ կը
կարդամք, մեր ղ տառը ph գրերով գրել են, ապա
մէկ f ֆով հուսկ յետոյ կարողացել են Հայոց ղ
(կէս վի ձայնով տառը) երկու ff ֆֆով ճիշդ հնչել
կամ յարմարագրել։

Առ այժմ առաւել զօրաւոր փաստեր չունենա-
լով՝ մեզ հաւանական երևցածը, իշխեցինք իբրու
մեկնութիւն Կաւա կամ Կաֆա անուան գրել, հայ
լեզուէ յառաջբերելով բառիս ստուգութիւնը։ Արդ
եթէ մեզ հաւանական երևցածը գիտնոց ևս ըն-
դունելի լինի, մինչև ցայսօր անյայտից կամ ան-
ծանօթից կարգը անցած մի պատմական քաղաքի
անուան ծագումը, պարզուած և յայտնի կը հա-
մարիմք։